ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆ ՈՒ ՆՐԱՆ ՏՐՎՈՂ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՄԱՐՏՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՑԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԾՈՎԻՆԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ԵՐԱՆՈՍ ԳՅՈՒՂԻ № 1 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Մարտունի 2023

Բովանդակություն

1.Ներածություն_____**3**

2. Գրական ակնարկ_____**4**

3. Փորձարարական հետազոտություն_____**11**

. Խմբի նկարագիրը_____**12**

. Փորձարարական դաս **1**_____**13**

. Փորձարարական դաս **2**_____**14**

4. Եզրակացություն_____**15**

5. Գրականության ցանկ_____**16**

6. Հավելված՝ դասապլաններ_____**17**

Ներածություն

Ժամանակակից կրթական պահանջները ենթադրում են չափազանց մեծ ուշադրություն տնային աշխատանքների կատարմանը: Հատկապես կարևոր է, որ տնային աշխատանքի կատարումը ենթադրի նաև հետադարձ կապի ապահովում, որպեսզի կատարված առաջադրանքները ինքնանպատակ չը-լինեն: Բազմաթիվ տարիների մասնագիտական գործնեության ընթացքում առնչվել եմ այնպիսի բիոդությունների, երբ ուսուցիչների կողմից տրված տնային առաջադրանքները եղել են ծավալուն, չեն ապահովել հետադարձ կապը ինչի արդյունքում դրանք չեն ծառայել իրենց նպատակին, ավելին աշակերտների մոտ առաջացրել են հետաքրքրության բացակայություն տը- նային առաջադրանքների կատարման նկատմամբ: Նախկինում ավանդական խնդիր էր տալ որոշակի քանակությամբ գիտելիքների, հմտությունների և կարողությունների անհրաժեշտ պաշար: Ներկայումս կրթության խնդիրը ուղղված է անհատականության զարգացմանը, սովորողների մոտ ինքնուրույն աշխատանքի հմտությունների և այնպիսի որակների ու ունակությունների ձևավորմանը,որոնք պետք է նրան հնարավորություն տան ինքնուրույն սովորել և ծավալել ինչոր գործնեություն, և արդյունքում, կյանքում լինել հաջողակ:.Այս կրթական համակարգը ապահովում է կրթական գործընթացում տարբեր ձևերի կազմակերպումը տնային ուսուցողական աշխատանք, գործնական աշխատանք,արտադպրոցական կրթական աշխատանք ,թեստեր, քննություններ:Դպրոցում ուսուցման կազմակերպման հիմնական ձևը դասն է: ՈԻսումնական գործընթացի բարելավման ուղիներից մեկը պետք է լինի տնա-յին հանձնարարությունների բովանդակության և հետադարձ կապի կազմա-կերպման բարելավումը:Այսօր մեր դպրոցում առկա խնդիրներն են բազմաթիվ պահանջները, յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունները, պետական ատեստավորո-ումը, սովորողների, նրանց ծնողներին և նույնիսկ ուսուցիչների վերաբերմունքը տնային հանձնարարությունների իրականացմանը

1. Տնային հանձնարարություններ և դրանց հետադարձ կապի ապահովման նշանակությունը և ներկայացվող պահանջներ

Տնային աշխատանքը տարբերվում է սովորողների դասարանական գործունեությունից: Այն, որպես կանոն, ընթանում է առանց ուսուցչի անմիջական ղեկավարության, թեպետև նրա ցուցումներով:

Դա իր կնիքն է դնում նրա բնույթի վրա:Դպրոցականն ինքը պետք է կարողանա որոշ ժամանակում, առանց հիշեցման, չնայած հնարավոր արգելակներին և ուշադրությունը շեղող հանգամանքներին, ձեռնարկել տնային առաջադրանքների կատարումը:

Ինքնուրույն աշխատելիս նա կարող է հանդիպել այնպիսի դժվարությունների, որոնք միշտ չէ, որ նախատեսվում են ուսուցչի կողմից դասարանում: Այսպես, դասագրքով աշխատելիս դպրոցականին կարող է դժվարացնել նրա բովանդակությունն ուսուցչի բացատրությունների հետ հարաբերակցելու անհրաժեշտությունը: Առաջադրանքը կատարելու ընթացքում սովորողը չի կարող անմիջապես որակյալ օգնություն ստանալ, որը նրա համար ապահոված է դասի ժամանակ: Տնային առաջադրանք կատարելը պահանջում է իր առաջադրանքը վերահսկելու, դրա մեջ սխալները գտնելու և ինքնուրույն կերպով դրանք վերացնելու կարողություն:

Աշխատելով տանը՝ ինքնուրույն աշակերտը զրկված է այն միջոցների ներգործությունից, որոնք կիրառում է ուսուցիչը աշխատանքն ավելի հրապուրիչ դարձնելու համար: Այդ պատճառով տնային աշխատանքն զգալիորեն ավելի մեծ չափով, քան աշխատանքը դասի ժամանակ, կախված է ուսումնական աշխատանքի նկատմամբ աշակերտի մեջ ձևավորված վերաբերմունքից, այն դրդապատճառներից, որոնցով նա ղեկավարում է ուսումնական առաջադրանքները կատարելիս:

Տնային ուսումնական աշխատանքի յուրակերպությունից ելնելով՝ փորձենք որոշել դրա մանկավարժական հնարավորությունները աշակերտը ոչ մի տեղ չի կարող այնքան ինքնուրույն լինել, ինչպես գործունեության այս տեսակում: Ինքն իրեն թողնված լինելով, իբրև անհրաժեշտություն, նա պարտավոր է ինքնուրույն կերպով մոտենալ ննաբկվող երևույթին:

Տնային պայմաններում աշակերտը կարող է ավելի լայնորեն ներգրավել շրջապատի իրականության նյութը ստացած գիտելիքների կիրառմանն ուղղված, աշակերտին կյանքի հետ մոտեցնող առաջադրանքները օգնում են ամբողջ ուսումնական պրոցեսն ավելի գործուն դարձնել:

2.Տնային հանձնարարությունները որպես խառը կամ համակցված դասի օղակ

Համակցված դասը հաճախ անվանում են հիմնական, քանի որ այն բաղկացած է ուսուցման գործընթացի բոլոր հիմնական օղակներից: Այսպիսի դասը իր մեջ ընդգրկում է անցած նյութի ստուգումը, գիտելիքների հաշվառումը և հմտությունների ձևավորումը, որոնք տրամաբանորեն կապված են տվյալ դասի բովանդակության, նոր նյութի ուսումնասիրման, նորի ուսուցման և ամրապնդման հետ՝ իր մեջ ներառելով ուսուցվող նյութի և անցած դասերի կրկնությունը: Խառը կամ համակցված անվանում են այն դասերը, որոնց մեջ հավասարապես ընդգրկված են ուսուցման գործընթացի երկուսից ավելի հիմնական օղակներ:

Խառը կամ համակցված դասերի անցկացման ժամանակ կազմակերպչական մասին անմիջապես հաջորդում է գիտելիքների և հմտությունների ստուգումը: Այն կարող է լինել բանավոր, գրավոր և գրավոր–գրաֆիկական:

Հարցման մեջ մտնում են նաև գրավոր հանձնարարությունները[1]:

Անցում նոր նյութի ուսումնասիրությանը:

Նոր թեմայի ուսումնասիրությունը, որն իր մեջ ընդգրկում է մեկ կամ մի քանի դասերի բովանդակություն, հանդիսանում է ուսուցման ողջ դասընթացի օղակներից մեկը: Ելնելով դրանից՝ այստեղ անհրաժեշտ է դառնում անցած և նոր դասերի հաջորդականության ապահովումը: Առանձնացվում և արդիականացվում են հանրահայտ փաստերը, որոնք տեղի են ունեցել որոշակի ժամանակագրական և տարածքային շրջանակներում:

Նոր նյութի պարզաբանման ընթացքում արդիականացվում ու բացատրվում են հասկացությունները:Նոր նյութի հաղորդման հաջողությունը առաջին հերթին պայմանավորված է ուսուցչի ընդունակություններից: Նա իր առջև նպատակ է դնում լուծելու երկու հիմնական խնդիր.

1) հաղորդել գիտական գետելիքների ողջ հարստությունը,

2)հմտորեն կազմակերպել սովորողների ճանաչողական ակտիվ գործունեությունը:

Դասի հիմնական մասը կարող է զբաղեցնել ուսուցչի կողմից դասի բացատրումը: Եթե բացատրմանը տրվում է կենտրոնական տեղ, ուրեմն մնացած բոլոր աշխատանքները ենթարկվում են նրան: Բացատրումը կառուցվում է՝ ելնելով սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններից: Ինչպես ցույց է տվել գործնական աշխատանքը, աշակերտները նոր նյութի պարզաբանման կամ դասագրքի ընթերցանության ընթացքում ավելի հեշտ են յուրացնում միաբնույթ, քան բազմաբնույթ բովանդակություն ունեցող նյութերը: Կանոնավորելով

[1] ¹ Древелов Х и др. Домашние задания: Книга для учителя. Перевод с немец. Н.С.Кабановой. – М.: Просвещение, 1989 с. 5.

դասագիրքը՝ ուսուցիչը բացատրում է գլխավորը, բովանդակության բարդ մասերը, բազային գիտելիքները՝ ավելացնելով և որոշակիացնելով դրանք անհրաժեշտ գլխավոր փաստերով և վառ կերպարային օրինակներով:

Ամրապնդում: Ամրապնդում ասելով հասկանում ենք ուսումնասիրվող թեմայի երկրորդ անգամ իմաստավորումն ու ընկալումը դասի ժամանակ: Ամրապնդման նպատակն է հասնել դասի ընթացքում ուսումնասիրված նյութը հիշելուն, կապ հաստատել նոր և հին դասերի միջև, ուժեղացնել սովորողների ուշադրությունը, ինչպես նաև ստուգել նոր նյութի յուրացման աստիճանը: Սկզբնական ամրապնդումը դասի ժամանակ կախված է ուսումնասիրվող նյութի բնույթից, չի կարելի վառ, զգացմունքային պատումը ընդհատել և անցնել ամրապնդման: Բայց փուլային ամրապնդումը անհրաժեշտ է: Եթե նյութը հեշտությամբ է բաժանվում ինքնուրույն, տրամաբանական մասերի, այնտեղ կարելի է ներմուծել տեսական ծանրաբեռնվածություն: Ամրապնդումը կարելի է անցկացնել անմիջապես ուսուցչի պատումից հետո: Այդ դեպքում էլ կրկնվում են հանգուցային իրադարձությունները՝ այն, ինչ որ հետ է մոռացվում և բարդ է՝ անունները, պատմական իրադարձությունների հաջորդականությունը, նրանց հիմնական բովանդակությունը, ընդհանրացումները, աշխարհագրական անվանումները, տարեթվերը:

Ընթացիկ կրկնություն: Դասի բացատրման կամ պարզաբանման ընթացքում ուսուցիչը անց է կացնում ընթացիկ կրկնությունը՝ անցած նյութի վերարտադրություն, որի միջոցով վերականգնվում է հին և նոր դասերի միջև օրգանական կապը, ինչպես նաև համակարգվում, ընդհանրացվում և խորացվում են գիտելիքները տվյալ դասից, բաժնից կամ ամբողջական դասընթացից: <u>Ընդհանրացումը գլխավորի և ընդհանուրի դուրս բերումն է:</u>

Նոր նյութի հետ կապն ապահովելու համար ուսուցիչը հիշեցնում է անցածը, համեմատում և համադրում է նոր և արդեն ուսումնասիրած դասերը: Ուսուցչի առաջարկով սովորողները անդրադառնում են դասագրքին, կարդում հատվածներ փաստաթղթից, կատարում թեստային աշխատանքներ:

Ուսումնական գործընթացում կարևոր նշանակություն ունեն տնային հանձնարարությունները, որոնք ակտիվացնում են սովորողների մտավոր

կարողությունները, մեծացնում են ինքնուրույնությունը, խթանում են դրանց պարբերաբար և որակյալ կատարումը:

Տնային աշխատանքն աշակերտի ծավալած ուսումնական գործունեությունն է, որը նա կատարում է ինքնուրույն: Այսինքն՝ տնային աշխատանքի կարևոր խնդիրներից մեկն աշակերտի ինքնուրույնության ձևավորումն է, որը մեծապես նպաստում է նրա՝ ուսումնահետազոտական գործունեություն ծավալելու կարողության զարգացմանը:

1.Տնային հանձնարարությունները կատարելիս աշակերտը փորձում է ինքնաստուգման տարբեր ձևեր և ընտրում դրանցից իր համար լավագույնը, բացահայտում է իր հիշողության մակարդակը, ակնկալվող արդյունքին հասնելու համար դրսևորում է ստեղծագործական մոտեցումներ: Այս դեպքում միայն տնային հանձնարարությունների կատարման գործընթացը կդառնա ուսումնառության և ինքնակրթության խթանիչ: Այսինքն՝ տնային աշխատանքն առաջին հերթին ինքնակրթության հանապարհ է:

2.Տնային ուսումնական աշխատանքի կազմակերպումը ուսումնադաստիարակչական գործընթացի շղթայում ամենաբարդ օղակն է: Բազմաթիվ ուսուցիչներ, ծնողներ այն կարծիքին են, որ տնային աշխատանքներ ընդհանրապես պետք չէ հանձնարարել: Նրանց կարծիքով, տնային առաջադրանքները տրվում են, որովհետև ուսուցիչը դասի ընթացքում չի կարողացել իր պարտականությունները կատարել և դա փոխլրացնում է մեծ ծավալով տնային աշխատանքներ հանձնարարելով: Դպրոցական գործընթացում օգտագործում են տնային հանձնարարությունների տարբեր ձևեր՝

1.անհատական

2.խմբային

3.ստեղծագործական

4.մեկը ամբողջ դասարանի համար

5. տարբերակված

Անհատական տնային հանձնարարությունները տրվում են դասարանի առանձին աշակերտների: Այս դեպքում հեշտ է ստուգել կոնկրետ աշակերտի յուրացման աստիճանը:

Խմբային տնային հանձնարարությունները տրվում են տարբեր խմբերի, որոնք կատարում են ամբողջ դասարանի հանձնարարության մի մասը: Այսպիսի աշխատանքը հանձնարարվում է նախապես և նախապատրաստում է սովորողներին հաջորդ դասին:

Ստեղծագործական տնային հանձնարարությունները տրվում են մի քանի օր առաջ, որոնք բացահայտում են երեխայի առանձնահատկությունները և թաքնված ընդունակությունները: Շատ կարևոր է առաջադրել յուրահատուկ հանձնարարություններ, պրոբլեմային իրավիճակներ, որոնք ստիպում են ինքնուրույն գտնել հարցի պատասխանը:

Ամբողջ դասարանի համար նույն տնային հանձնարարությունները տրվում են ամբողջ դասարանի համար, որը ամենատարածված տեսակն է: Այսպիսի աշխատանքները չեն բերում սովորողների ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը, բայց ձևավորում են հմտություններ և կարողություններ:

Տարբերակված տնային հանձնարարությունները տրվում են տարբեր ընդունակություններով սովորողների համար ըստ բարդության: Սա նաև յուրօրինակ անհատական աշխատանք է:

Դասակարգենք այն պահանջները, որոնք վերաբերում են ինչպես ուսուցչին, այնպես էլ տնային հանձնարարությունների բնույթին[2]:

Ուսուցիչներին վերաբերող պահանջներ	Առաջադրանքներին ներկայացվող պահանջներ
1. Երաշխավորելի չէ տանը հանձնարարել այն, ինչն արդեն յուրացվել է դասարանում: Անհրաժեշտ է ստույգ իմանալ, թե ինչ նպատակէ հետապնդում տնայինաշխատանքը: – Ուսուցիչը պետք է ինքն իրեն հարց տա՝ ինչու՞ է հանձնարարում աշխատանքը, ի՞նչ նպատակ է հետապնդում այն, ի՞նչ կարողություն է զարգացնելու այլն	Առաջադրանքի բովանդակությունը պետք է հասկանալի լինի յուրաքանչյուր աշակերտի, այսինքն՝ բոլոր աշակերտները պետք է իմանան, թե ինչ պիտի անեն և ինչպես պիտի անեն
2. Յուրաքանչյուր առարկայից տրվող տնային առաջադրանքների ծավալը պետք է համապատասխանեցնել այլ առարկաներից տրվող տնային աշխատանքների ծավալին	3. Առաջադրանքը չի ծառայի նպատակին, եթե դրա հետ միասին չտրվի համապատասխան հրահանգավորում:
3. Տնային աշխատանքի անհրաժեշտությունը պետք է լինի հիմնավորված: Եթե ուսուցիչը տվյալ օրն աշխատանքը կազմակերպել է այնպես, որ սովորողներն ամբողջ ուսումնական նյութը յուրացրել են դասի ընթացքում, ապա կարող է ընդհանրապես տնային աշխատանք չհանձնարարել:	3. Տնային աշխատանքը պետք է անպայման ստուգվի ուսուցչի կողմից:

[2] Ա.Պետրոսյան, Տնային աշխատանքը որպես ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար, Գիտական Սրցախ, № 2(3), 2019 էջ 5

4. Պահպանելով տնային առաջադրանքի հիմնական բովանդակությունը՝ առանձին աշակերտների համար կարելի է մասնակիորեն անհատականացնել նրա նպատակը, ծավալը, կատարման հնարները:	4. Առաջադրանքը կարող է լինել տարբեր՝ համընդհանուր կամ համադասարանային, տարբերակված, անհատական և այլն. տեսակն ընտրելիս պետք է հաշվի առնել դասարանի ընդհանուր առանձնահատկությունները:
	5. Առաջադրանքը չպետք է լինի միօրինակ. անհրաժեշտ է ներառել ոչ ստանդարտ հարցեր, դիտարկումներ կատարելու պահանջներ և այլն:
6.Մեկ ուսումնական առարկայից տնային աշխատանքի կատարման վրա ծախսվող ժամանակը չպետք է գերազանցի 2-րդ դասարանում՝ 20 րոպեն, իսկ 3-րդ և 4-րդ դասարաններում՝ 30 րոպեն:	6. Առաջադրանքը պետք էկողմնորոշի սովորողներին՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու, հարստացնի նրանց գիտելիքները, զարգացնի կարողությունները:
7. Տնային աշխատանքի ծավալը չպետք է գերազանցի դասարանում կատարած աշխատանքների 30%-ը:	7. Առաջադրանքներում պիտի ընդգրկվեն այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն ծրագրի հիմնական բաժինների կրկնությանը:
8. Դասագրքում զետեղված բարդ առաջադրանքները, որոնք առանձնացված են աստղանիշով կամ մեկ այլ տարբերակիչ նշանով, չի կարելի հանձնարարել տանը	8. Ըստ բարդության աստիճանի՝ տնային աշխատանքը պետք է լինի մոտավորապես նույնը կամ փոքր-ինչ ավելի դյուրին այն առաջադրանքներից, որոնք կատարվել են դասի ընթացքում:
	9. Առաջադրանքները կատարելիս աշակերտները կարող են հանդիպել որոշակի դժվարությունների: Դրանք պետք է հասանելի լինեն նրանց կարողություններին:
	10. Առաջադրանքները պետք է աշակերտից պահանջեն համեմատել, վերլուծել, ընդհանրացնել, դասակարգել հաստատել պատճառա-հետևանքային կապերը, ձևավորել եզրահանգումը, յուրացրած գիտելիքները կիրառել նոր իրավիճակում:

Առաջարկում ենք տնային հանձնարարությունների կատարման հետևյալ օրինաչափությունները՝

Սովորողը

1. պետք է ունենա հետաքրքիր կապ

2. պետք է հետաքրքիր լինի

3. պետք է արդարացված լինի

4. պետք է չափավոր լինի

5. պետք է բազմամակարդակ լինի

6. պետք է հուզական լինի

Տնային հանձնարարությունները պետք է հասկանալի լինեն յուրաքանչյուր աշակերտի, պետք է նախապես բացատրված լինեն և համապատասխանեն ուսումնասիրված նյութին: Պետք է հիշել, որ տնային հանձնարարությունները բացատրվում և հանձնարարվում են մինչև զանգի տալը: Ուսուցիչը պետք է դասին վստահ լինի, որ աշակերտը գիտի, թե ինչ և ինչպես պետք է կատարի տանը:

Սովորողին չծանրաբեռնելու համար պետք է սահմանափակել տնային հանձնարարությունների չափը: Տնային հանձնարարությունների ծավալը մեկ առարկայից պետք է կազմի բոլոր առարկաների վրա ծախսած ժամանակի 4-5-րդ մասը:

Տնային հանձնարարությունների կատարման թույլատրելի ժամային սահմանները. 1-ին դասարանում - մինչև 1 ժամ

2-րդ դասարանում - մինչև 1,5 ժամ

3-4-րդ դասարանում -մինչև 2 ժամ

5-6-րդ դասարանում -մինչև 2,5 ժամ

7-8-րդ դասարանում -մինչև 3 ժամ

9-12-րդ դասարանում -մինչև 4 ժամ

Տնային հանձնարարությունների կատարման ժամանակ պետք է ընդմիջումներ անել: Այսպես,յուրաքանչյուր 25-45 րոպե սովորելուց հետո պետք է ընդմիջել 5-10 րոպե, կատարել մարմնամարզություն և աչքի վարժություններ, կարելի տնային գործեր անել /ծաղիկներ ջրել և այլն/:

Տնային հանձնարարությունների դերը արժեզրկվում է, եթե չի իրականացվում դրանց պատշաճ ստուգում: Կարելի է առանձնացնել տնային հանձնարարությունների ստուգման հետևյալ ձևերը՝

1.անհատական ստուգում,

2.ֆրոնտալ ստուգում,

3.ինքնաստուգում,

4.փոխադարձ ստուգում

5. ընտրովի ստուգում[3]:

Մեծ է նաև ծնողների դերը երեխաների դասապատրաստման գործընթացում, ծնողները պետք է զարգացնեն և ամրապնդեն իրենց երեխաների ինքնուրույնությունը և պատասխանատվության զգացումը: Ծնողները պետք է ստեղծեն անկյուն և ապահովեն բոլոր պայմաններով դասապատրաստումը արդյունավետ դարձնելու համար: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել նրան, որ աշխատասեղանը լավ լուսավորված լինի, սենյակը՝ լավ օդափոխված, իսկ ջերմաստիճանը՝ նորմալ, աթոռը համապատասխանի երեխայի հասակին: Երեխայի սենյակը, հնարավորինս, պետք է մեկուսացված լինի, որ դասապատրաստումը կատարվի հանգիստ պայմաններում և ոչինչ չխանգարի նրան: Ծնողների հետաքրքրվածությունը երեխայի դպրոցական կյանքին՝ հանգեցնում է ուսման մեջ նրա հաջողություններին:

Թեմայի նպատակը և խնդիրները. Մեր աշխատանքի նպատակն է ներկայացնել տնային հանձնարարությունների անցկացումը և հետադարձ կապի վերլուծությունը դասավանդման գործընթացում:

Խնդիրներն են.

- ✔ ներկայացնել տնային հանձնարարությունների էությունը և հետադարձ կապի ապահովումը

[3] Крупская Н. К. Методика задавания уроков на дом. // Избранные педагогические сочинения. – М.: изд-во АПН РСФСР, 1948. – С. 203.

- ✔ ուսումնասիրել տնային հանձնարարությունների տեսակները և ստուգման ձևերը,
- ✔ կազմել տնային հանձնարարության օրինակ տարրական դասարանում դասավանդման գործընթացում,

Խմբի նկարագիրը

Փորձարարական դասը անցկացրել եմ Երանոս գյուղի № 1 միջնակարգ դպրոցի III Ա դասարանում: Դասարանը բաղկացած է 19 աշակերտից՝ 11 տղա, 8 աղջիկ: Գերազանց են սովորում 8 աշակերտ՝ որից 3-ը տղա, 5 աղջիկ: Միջին առաջադիմություն ունեն 10 աշակերտ՝ 7 տղա, 3 աղջիկ, թույլ առաջադիմություն ունի 1 աշակերտ (տղա):

Դասարանում բարոյահոգեբանական մթնոլորտը գտվում է լավ վիճակում, աշակերտները ունեն լավ հարաբերություններ, որը նաև նպաստում է ուսումնառության որակի բարելավմանը: Բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները օգնում են թույլ կամ միջին առաջադիմությամբ աշակերտներին, յուրացնելու ուսումնական նյութը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ ***1***

Ստորև ներկայացվում է *III* Ա դասարանում մայրենիի փորձարարական դասին տրվող տնային աշխատանքների հանձնարարում և հետադարձ կապի ապահովումը թեմայով փորձարարական դասի նկարագիրը: Հովհաննես Թումանյանի<<Կացին ախպեր>> հեքիաթը ընտրել եմ, որպես փորձարարական դասի թեմա և կատարել եմ հետազոտություն:

Դասի ընթացքը .

Սկիզբը- **3-5** րոպե – աշակերտների ներկա-բացակա, կազմակերպչական այլ հարցեր:

Խթանում -**5** րոպե սկսում եմ մտագրոհի մեթոդով:Գրատախտակին փակցնում եմ <<Կացին >> բառով պաստառ և նրա շուրջը խմբավորում բոլոր այն բառերը և արտահայտությունները,որոնք վերաբերվում են կացինին և որոնք կարտահայտ- վեն աշակերտների կողմից, կգրվեն նրանց բոլոր մտքերը(ճիշտ,թե սխալ): Այնուհետև կգրեմ գրատախտակին հետևյալ անավարտ նախադասությունը <<Եթե ես ամենակարող կացինն ունենայի...>> և հանձնարարում եմ աշակերտներին իրենց տետրում ավարտել նախադասությունը:Այնուհետև ընթերցում են իրենց մտքերը: (5րոպե)

Իմաստի ընկալում-**12** րոպե Մինչ տեքստի ընթերցումը <<Կանխագուշակում>> մեթոդով առաջարկում եմ **5** րոպեանոց շարադրանք :Ի՞նչ արկածներ կարող է ունենալ կացինը:Կլսենք գրված շարադրանքները:Այնուհետև տեքստը բաժանել եմ չորս մասի և աշակերտների կողմից ընթերցվել է այն ուղղորդված դադարներով: Յուրաքանչյուր հատվածից հետո առաջադրել եմ հարց,- Ի՞նչ կլինի հետո:

1-ին դադար: «Կացինն առան , որ հերթով կոտրեն իրենց փայտը»:

2-րդ դադար: «Երբ կրակն իջավ , եկան, բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է»:

3-րդ դադար: «Տարան - գցեցին տանուտերի մարագը »

4-րդ դադար: Ընթերցել մինչև վերջ:

Աշխատանք նկարի շուրջ- **8** րոպե

Սահուն կարդալու կարողություն զարգացնելու նպատակով կիրառվ եմ «Գտիր նախադասությունը» մեթոդական հնարը, հետո արտահանում եմ բանալի բառը, իսկ աշակերտները պետք է գտնեն այն նախադասությունը, որի մեջ օգտագործվում է բանալի բառը:

Կշռադատում-**10** րոպե Կշռադատման փուլում կիրառեցի «Քառաբաժան» հնարը: Յուրաքանչյուր խմբին բանաձվեց հարցաթերթիկներ:

Ամփոփում -5 րոպե: Դասի այս հատվածում ընդհանուր հարցերի միջոցով ամփոփեցինք դասը:

Տնային առաջադրանքի հանձնարարում- 5 բոպե դասի այս փուլում, աշակերտներին հանձնարվեց տնային առաջադրանքներ, որոնք եռամակարդակ էին, և աշակերտները իրենք են ընտրում կատարվող առաջադրանքների ծավալը՝ ըստ իրենց կարողությունների:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Որպես փորձարարական դասի երկրորդ թեմա ընտրել եմ Գոհար Փիլոյանի « Կաթիլը» թեման III Ա դասարանում: Դասարանի կազմը ամբողջական էր:Ներկա բացակա կատարելուց հետո անցանկ դասի ընթացքին:

Դասի ընթացքը- Մանրամասն անդրադարձ կատարվեց տնային աշխատանքների ստուգմանը:Քանի որ տնային առաջադրանքների կատարման ծավալը ընտրել էին աշակերտները , տնային առաջադրանքների ծավալը տարբերվու էր միմյանցից:

Այնուհետև մտագրոհ մեթոդի միջոցով անցում կատարվեց նոր հանձնարարվող նյութի բովանդակությանը:Ապա «ՈՒղորդված ընթերցանություն» մեթոդի միջոցով աշակերտները հատված առ հատված ուսումնասիրեցինհանձնածածվող նյութը:Այնուհետև աշակերտներին հանձնարարվեց ինքնակպչուն թղթերի վրա գրել և գրատախտակին փակցնել պարզ,բարդ և ածանցավոր բառերը:Այս ամենի ավարտից հետո աշակերտներին հանձնարավեց կատարել վերլուծություն և եզրահանգումներ նյութի սյուժեի վերաբերյալ:Դասի ավարտի,մանրամասն բացատրելուց հետո աշակերտներին հանձնարավեց տարա մակարդակ տնային առաջադրանքներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ավարտելով «Տնային առաջադրանքն ու նրա տրվող հետադարձ կապի դերը ուսումնառության մեջ»թեմայով հետազոտական աշխատանքը, կարող ենք եզրակացնել,որ ուսումնական գործընթացում չափազանց կարևոր տեղ է զբաղեցնում ուշադրությունը դեպի աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի կատարմանը:Ինքնուրույն աշխատանքը, որի մաս է կազմում նաև տնային առաջադրանքների կատարումը, մեծապես կարող է բարձրացնել աշակերտների հետաքրքրվածությանը դեպի դասը, նախապայմանով,որ տնային առաջադրանքները չպետք է լինեն ինքնանպատակ, շատ և ծանրաբեռ: Զափազանց կարևորում եմ նաև հետադարձ կապի ապահովմանը հանձնարարված տնային առաջադրանքների կատարմանը: Վերոնշյալ տեսակետը փորձելով ինչպես փորձարարական դասերի ընթացքում և դասաժամերին, եկել եմ այն եզրակացության, որ այս մեթոդի շնորհիվ էականորեն մեծանում է նաև աշակերտների պատրաստվածությունը և պատրաստակամությունը դեպի տնային առաջադրանք ների կատարմանը: Բացի այդ տնային առաջադրանքները պետք է լինեն տարբերակված, բխեն չափորոշիչային վերջնարդյունքներից և աշակերտներին տան հնարավորություն տրված առաջադրանքները կատարել ինքնուրույն:

Այսպիսով ավարտելով հետազոտական աշխատանքս, առաջարկում եմ յուրաքանչյուր դասի ընթացքում հետադարձ կապ ստեղծել հանձնարարված տնային առաջադրանքներին և մանրամասն հետևել դրանց կատարմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Կ.Թորոսյան, Կ. Զիբուխչյան, Ա.Բալայան, Ինչպես պլանավորել մայրենիի դասը

2.ՆԱԽԱՇԱՎԻՂ 7.2010

3. ՆԱԽԱՇԱՎԻՂ 8.2013

4. Ա.Պետրոսյան, Տնային աշխատանքը որպես ինքնուրույն ուսումնական գործունեության արդյունավետ հնար, Գիտական Սրցախ, № 2(3), 2019

5. Древелов Х и др. Домашние задания: Книга для учителя. Перевод с немец. Н.С.Кабановой. – М.: Просвещение, 1989

6. Крупская Н. К. Методика задавания уроков на дом. // Избранные педагогические сочинения. – М.: изд-во АПН РСФСР, 1948.

Դասապլան 1 ՈՒսուցիչ՝ Ծովինար Ղազարյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	3
Թեմա՝	Հովհաննես Թումանյանի «Կացին ախպերը»						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, գրատախտակ, կավիճ, պաստառ, ինքնակպչուն թղթեր,գրիչ, տետր						
Դասի նպատակը	.ընթերցեն տեքստը՝ համեմատելով կանխագուշակումները հեքիաթի բովանդակության հետ: .վերարտադրեն տեքստը՝ ներկայացնելով տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը .գուշակեն հեքիաթի բովանդակությունը՝ գրելով պատմողական կամ նկարագրական բնույթի խոսք կացնի արկածներից մեկի մասին .մասնակցեն տեքստի շուրջ կազմակերպվող քննարկումներին՝ պատասխանելով եզրահանգման և ստեղծագործական բնույթի հարցերին						
	ՈՒսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքը	Աշակերտները կկարողանան՝ . վերարտադրել հեքիաթի տեքստը .կվերարտադրեն տեքստը՝ ներկայացնելով տեքստում նկարագրված իրադարձությունների միջև առկա կապերը .կարողանան գրել կացնի արկածներից մեկիի մասին .առանձնացնել կացնի արկածները և դրա նմանությամբ ստեղծել նոր հեքիաթ						
Գործողություններ (ժամ,տևողություն)	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ՈՒսուցիչ		Հարցադրումներ		Կիրարվող մեթոդ	

Սկիզբը- 3-5 րոպե Ընթացք 25-30	Մտածում են , ասում կացին բառին համապատասխան հատկանիշ ցույց տվող բառեր, ավարտում են անավարտ նախադասությունը: Լսում են, և գրում շարադրանքը, ապա ներկայացնում իրենց գրածը: Ընթերցում են տեքստը ուղղորդված դադարներով: Բանալի բառը գտնում են տեքստի նախադասության մեջ: Պատասխանում են հարցերին	աշակերտների ներկա-բացակա, կազմակերպչական այլ հարցեր: Մտագրոհ է անում «Կացին» բառով և գրատախտակին գրում անավարտ նախադասություն: Կանխագուշակման մեթոդով հանձնարարում է 5րոպեանոց շարադրանք լսում են և տալիս հարց: Տալիս է բանալի բառ: Տալիս է հարցեր	Ինչ կլինի հետո Մարդն ինչպե՞ս զարմացրեց գյուղի բնակիչներին:	Մտագրոհի մեթոդ, Անավարտ նախադասություն, Կանխագուշակում Գտի՛ր նախադասությունը

			.Ի՞նչը ստիպեց գյուղացիներին կացին այրել: . Ի՞նչ ես կարծում՝ գյուղացիներն ինչո՞ւ չկարողացան ճիշտ օգտագործել կացին: .Եթե կացինը լեզու ունենար, ի՞նչ կասեր գյուղացիներին: .Հիշի՛ր ստեղծագործություններ,որոնց հերոսներին կարող ես նմանեցնել գյուղացիներին:	
Տնային աշխատանք	Առաջադրանք ինքնուրույն աշխատանքի համար:Տրվում է տարամակարդակ առաջադրանքներ: **1**-ին մակարդակ: Տեքստի (Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց , դարսեց մյուս կողմ) նախադասությունից դո՛ւրս գրիր բայերը,ձևափոխի՛ր դրանք և օգտագործի՛ր տարբեր օժանդակ բայերի հետ: **2**-րդ մակարդակ: Վերոնշյալ նախադասութիունից և առաջին պարբերությունից դո՛ւրս գրիր բայերը, ձևափոխի՛ր դրանք և օգտագործի՛ր տարբեր օժանդակ բայերի հետ: **3**-րդ մակարդակ: Վերոնշյալ նախադասությունից, առաջին և վերջին երկու պարբերություններից դո՛ւրս գրիր բայերը, ձևափոխի՛ր դրանք և օգտագործի՛ր տարբեր օժանդակ բայերի հետ:			

Դասապլան 2

ՈՒսուցիչ՝ Ծովինար Ղազարյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	3
Թեմա՝	Կաթիլը						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք,տետր, գրատախտակ, կավիճ,ինքնակպչուն թուղթ, պաստառ,,գրիչ,մատիտ						
Դասի նպատակը	. ներկայացնել պարզ, բարդ և ածանցավոր բառերը անծանոթ բառերի իմաստները .զարգացնել բառակազմական հմտություններ . զարգացնել վերլուծական կարողությունները .կատարել մեկնաբանություններ և եզրահանգումներ						
	ՈՒսուցման արդյունքներ,որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքը	Աշակերտները կկարողանան՝ վերարտադրել տեքստը՝ պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը. .ուղորդող հարցերի միջոցով կբացատրեն անծանոթ հարցերի իմաստները .դուրս կբերեն պարզ, բարդ և ածանցավոր բառերը .ձևակերպել բովանդակության վերլուծությունը կատարելով մեկնաբանություններ և եզրահանգումներ .գնահատել տեքստի հերոսների վարքագիծը						
Գործողություններ (ժամ,տևողություն)	ՈՒսումնական գործունեություն Աշակերտներ	ՈՒսումնական գործունեություն ՈՒսուցիչ		Հարցադրումներ		Կիրարվող մեթոդ	

Մուտք -5 րոպե /հերկա, բացակա/				
Սկիզբ- 12 րոպե	Աշակերտները կարդում են տնային հանձնարարությունները պատասխանում ուսուցչի տված հարցերին:	Անդրադարձ նախորդ դասին հանձնարարված տնային առաջադրանքների քննարկմանը:Մտագրոհ մեթոդի միջոցով անցում նոր հանձնարարվող նյութին:		Հարց և պատասխան Մտագրոհ
Ընթացք-25 րոպե	ՈՒշադիր լսում են ուսուցչի հանձնարարությունը, կարդում են հատված առ հատված,հանձնարարված տեքստը մեկ անգամ մտքում, մեկ անգան բարձրաձայն: Պատասխանում են ուսուցչի հարցերին, ուշադիր լսում են հանձնարարված տնային առաջադրանքները:	«ՈՒղղորդված ընթերցանություն» մեթոդով հատված առ հատված կատարվում է տեքստի ուսումնասիրությունը:Ընթացքում տրվում են հարցեր: Աշխատանք տեքստի բովանդակության շուրջ: Ամփոփում, տնային աշխատանքի հանձնարարում	.Ինչպիսի՞ն էր Կաթիլը մինչև սառնամանիքի կաշկանդելը: .Կաթիլի ֆույրիկները ինչպե՞ս էին ամպ դարձել: .Ինչու են կաթիլները Ագավին խելոք համարում: .Ողջ պատմության ընթացքում տրամադրության ինչպիսի՞ փոփոխություններ ունեցավ Կաթիլը:	ՈՒղղորդված ընթերցանություն
Ավարտ-5 րոպե				

Տնային աշխատանք	Պաստառի վրա փակցվում են տարամակարդակ առաջադրանքներ. ***I*** մակարդակ: Տրված բառերը տեղադրի՛ր աղյուսակի համապատասխան սյունակներում: տերևաթափ,աստղիկ, արևածաղիկ, օրացույց,ջուր, կաթիլ, գարնանային, գետակ, շող. ***II***մակարդակ: Շարունակի՛ր լրացնել աղյուսակը՝ համապատասխան բառերն ընտրելով «Կաթիլը»տեքստից: ***III*** մակարդակ: Շարունակի՛ր լրացնել աղյուսակը՝ համապատասխան սյունակներում գրելով հինգական բառ:			